# ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՁԵՌԱՄԲ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿԱՏԱՐՎԵՑ ՆՈՐ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՄՆԱՇԵՆՔԻ ՀՈՂՕՐՀՆԵՔԸ

Սույն թվականի օգոստոսի 31-ի երեկոյան Մայր Աթոռի շուրջը ծավալված մեծ շինհրապարակներին ավելացավ ևս մեկը, քանզի հիմք դրվեց Մայրավանքի միաբանական մի նոր կացարանի շինարարությանը: Երեկոյան ժամերգությունից առաջ Մայրավանքիս միաբանները, գլխավորությամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ներկայությամբ շինարարության հովանավորությունը ստանձնած բարեբարի քրոջ՝ Լուիզ-Սիմոն Մանուկյանի և նրա դստեր, ինչպես նաև հավաքված մեծաթիվ հավատացյալ ժողովրդի, կատարեցին հողօրհնեքը կառուցվող միաբանական նոր շենքի: Արարողությանը պատշաճող ավետարանական ընթերցվածներից հետո Նորին Սրբությունն օրհնեց հիմքերը: Ապա նաև մի գալարափաթեթով արձանագրություն դրվեց հիմքերի մեջ, ուր նշվում է կառուցման թվականը, բարերարի անունը և թե ո՞ր կաթողիկոսի գահակալության օրոք է կատարվել կառույցի շինարարությունը:

Հիմքերի օրհնությունից հետո Վեհափառ Հայրապետն իր օրհնության խոսքն ուղղեց բարերարներին և ներկաներին՝ քաջառողջություն և երկար փարիների արդյունաշատ ու հայրենանվեր կյանք մաղթելով բարերարին, ավելացրեց. «Մեր աղոթքն է, որ Տերը զորացնի մեր Եկեղեցին և ուժ, կորով պարգևի մեզ՝ եկեղեցականներիս, մեր առաքելությունն ամբողջանվեր իրականացնելու և արդարացնելու այն բոլոր հույսերն ու ակնկալիքները, որ ունի ժողովուրդը մեր հանդեպ»:

Ինչպես ասացինք, սույն եկեղեցաշեն ձեռնարկն իրականացվում է ազգային մեծ բարերար Ալեք Մանուկյանի որդու՝ Ռիչարդ Մանուկյանի հովանավորությամբ և Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ Ռուբեն Ազատյանի նախագծով: Կառուցվող երկհարկանի շենքն ունենալու է 50 միաբանական խուց և իր ավարտին կհասնի մինչև 2004 թ.:

*ԱՐԹՈՒՐ ՄՐԿ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*